



ԴՐԱՄԻ 20-ԱՄՅԱԿԸ ՄԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՈՆՆ Է

18.11.2013



Հայաստանի բանկերի միության (ՀԲՄ) նախագահ Սամվել Ճզմաչյանը հայկական ազգային արժույթի 20-ամյակի կապակցությամբ շնորհավորական ուղերձներ է հղել ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Զավադյանին և Հայաստանի տարածքում գործող բոլոր առևտրային բանկերի ղեկավարներին:

ՀՀ ԿԲ-ի նախագահին ուղղված իր նամակում Ս. Ճզմաչյանը, մասնավորապես, ընդգծել է այն հանգամանքը, որ դրամը ներդրվեց Հայաստանի նորագույն

պատմության ամենաթեժ և ցավազին շրջաններից մեկի ժամանակ՝ ահռելի գնաճի և տնտեսության սրընթաց անկման պայմաններում, որպեսզի կանխվի երկրի հետագա թուլացումը: «Հետագայում ևս ազգային արժույթի 20-ամյա ուղին միշտ հարթ և անամպ չի եղել, բայց այսօր մենք բոլորս կարող ենք գոհունակությամբ փաստել, որ մեր դրամը կայացել է և կայունացել:

Ինչնիցե, անկախ պետության կայացման համար հենց հայկական դրամն էր վերջին պակասող ատրիբուտը և խորհրդանիշը, որը թույլ տվեց մեր երկրում ձևավորել լիարժեք բանկային համակարգ և վարել ինքնուրույն դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականություն՝ ասված է ուղերձում:

Առևտրային բանկերի ղեկավարներին ուղղված նամակում ՀԲՄ-ի նախագահը ընդգծել է՝ «Այն ժամանակ հայկական դրամը կատարեց իր առաքելությունը,

կանխելով տնտեսության և ընդհանուր առմամբ ամբողջ երկրի հետագա թուլացումը և ամբողջականացնելով մեր պետականության խորհրդանիշը»:

Ուղերձում նաև նշվում է, որ հայկական դրամը, իր ոչ երկար պատմության ընթացքում անցնելով մի շարք «աճի հիվանդությունների» միջով, հիմա մտել է հասունության և կայունության շրջան: «Եվ դրանում, անկասկած, Դուք ունեք նաև Ձեր լուսն: Համոզված եմ, որ ընդհանուր ջանքերի շնորհիվ դրամը կշարունակի ամրապնդվել և ավելացնել վստահությունն իր հանդեպ»՝ գրում է Ս. Ճզմայանը:

ՖԻՆԱՆՍԻՍՆԵՐԻ և ԲԱՆԿԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 2-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎ,  
ԿԱՍ  
«ՍՊԱՐՏԱԿԸ» ՊԱՐՈՒՄ ԷՐ ԴՐԱՄԻ ՊԱՏՎԻՆ

21-22.11.2013



Նոյեմբերի 21-ին Երևանում մեկնարկեց ֆինանսիստների և բանկիրների համահայկական 2-րդ համաժողովը, որը կազմակերպվել էր ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ: Պետք է նկատել, որ այս միջոցառումը շատ տեղին համընկավ նոյեմբերի 22-ին Հայաստանում նշվող Բանկային աշխատողի օրվա և ազգային դրամի 20-ամյա հոբելյանի հետ:

Համաժողովի առաջին նիստի թեման էր «Դրամավարկային քաղաքականությունը որպես գների կայունության ապահովման կարևորագույն միջոց»: Այս թեմայով իրենց տեսաներկայացումներով և զեկույցներով հանդես եկան Արժույթի միջազգային հիմնադրամի (IMF) հայաստանյան գրասենյակի, ԱՄՆ-ի միջազգային գործակալության (USAID), ՀՀ Կենտրոնական բանկի ներկայացուցիչները:

Երկրորդ նիստի ընթացքում «ՀՀ ֆինանսական համակարգը. Կայացումը, զարգացման հեռանկարներն ու հնարավոր մարտահրավերները» թեմայով ելույթ ունեցան ՀՀ Կենտրոնական բանկի, Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկի (EBRD), Ասիական զարգացման բանկի (ADB) և

առևտրային բանկերի ներկայացուցիչները: Առանձին տեսաներկայացումով հանդես եկավ նաև ՀԲՄ նախագահի տեղակալ Սեյրան Սարգսյանը:



Ֆորումի երկրորդ օրը (նոյեմբերի 22) մասնակիցները սկսեցին Մատենադարանի և ՀՀ Կենտրոնական բանկի այցելուների կենտրոնի այցելությամբ: Այնուհետև համաժողովի մասնակիցներին և հյուրերին ընդունելություն էր սպասում Հայաստանի ազգային պատկերասրահի որմնանկարների սրահում, նվիրված դրամի 20-ամյակին: ՀՀ դրամի օրվան էր նվիրված նաև հոբելյանական համերգը, որը ֆինանսիստները և բանկիրները դիտեցին երեկոյան՝ Արամ Խաչատրյանի «Մպարտակ» բալետը Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում:

#### ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ԿԼՈՐ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

22.11.2013



Դրամի 20-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում նոյեմբերի 22-ին Երևանում կայացել է «Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգը. Ստեղծումը, կայացումը և մարտահրավերները» թեմայով կլոր սեղան:

ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանը շնորհավորել է մասնակիցներին հայկական

արժույթի թողարկման 20-ամյա հոբելյանական տարեդարձի և բանկային աշխատողի օրվա կապակցությամբ, ընդգծելով, որ «այսօր մենք հպարտությամբ ենք նայում այդ դժվար, բայց բովանդակությամբ հարուստ ուղուն»:

Կլոր սեղանի աշխատանքներին մասնակցել են ՀԲՄ նախագահ Սամվել Ճզմաչյանը, Հայաստանում ՎՋԵԲ-ի, ԱՄՀ-ի, KfW բանկի ներկայացուցիչները, Միջպետքանկի նախագահ Իգոր Սուվորովը, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ֆինանսական քաղաքականության ստորաբաժանման տնօրեն Բեմբյա Խուլիաչիերը, Լիբանանի բանկի նախագահի տեղակալ Հարություն Սամուելյանը, ՀՀ-ում գործող բանկերի ղեկավարները, այլ ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Միջոցառման ընթացքում տեսաներկայացմամբ, որը նվիրված էր Հայաստանի բանկային համակարգի անցած ուղուն, նրա հեռանկարներին և նոր մարտահրավերներին, հանդես եկավ ՀԲՄ-ի նախագահի տեղակալ Սեյրան Սարգսյանը:

#### ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԷՔՍՊՈ GOLDEN PALACE-ՈՒՄ

25.11.2013



«Էմփայր» բիզնեսի աջակցման կենտրոնը և «Էմփայր միջազգային էքսպո կենտրոնը» ս.թ. դեկտեմբերի 17-18-ը Երևանի «Գոլդեն Փելես» հյուրանոցում նախաձեռնել են իրականացնել «Բանկեր, վարկեր և ներդրումներ» խորագրով էքսպո, որը նպատակ ունի ներկայացնել Հայաստանի բանկային համակարգի լավագույն ձեռքբերումները, բանկերի և ֆինանսավարկային կազմակերպությունների դերը գործարարության զարգացման, հատկապես, փոքր և միջին ձեռնարկատիրության խրախուսման, աշխատատեղերի ստեղծման գործընթացներում:

«Էմփայր միջազգային էքսպո կենտրոնի» տնօրեն Փույա Հոսսեինիի խնդրանքով, Հայաստանի բանկերի միությունը ևս մասնակցեց այս միջոցառման նախապատրաստման գործին:

Էքսպոյի շրջանակներում բոլոր մասնակից բանկերին կտրամադրվեն սերտիֆիկատներ և մրցանակներ: Իրենց էքսպո տարածքում մասնակիցները գովազդային վահանակներ, պոստերներ և այլ նյութեր տեղադրելու հնարավորություն կունենան:

Էքսպոյին կարող են մասնակցել բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ, գնահատման և փորձագիտական գործակալություններ, ներդրումային ընկերություններ և ֆոնդեր, առդիտորական, հաշվապահական ընկերություններ, միջազգային դոնոր կազմակերպություններ:

Էքսպոյի համար կտպագրվի մասնակիցների կատալոգ, իրենց լոգոներով և պաշտոնական տվյալներով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.**

Հայաստանի բանկերի միությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միությունն է: Միությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպություն:

- Միության հիմնական խնդիրներն են՝
- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,
  - նպաստել միջբանկային կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,
  - մասնակցել Հայաստանի Հանրապետությունում բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց հասարակական փորձաքննությանը,
  - մշակել և իրականացնել ծրագրեր՝ բանկային կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
  - կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ և գիտաժողովներ,
  - իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +374 10 52 77 31, Էլ. փոստ՝ [uba@uba.am](mailto:uba@uba.am):